

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2021թ.

N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա և 2020 թվականի ապրիլի 28-ի հ.219-Ա որոշումները, ինչպես նաև Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի լուծարման հանձնաժողովի նախագահ՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանի 12.10.2021թ. զեկուցագիրը՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից հաշվարկված Երևանի բյուջե շահութաբաժնի՝ 12007.3 հազ.դրամի (տասերկու միլիոն յոթ հազար երեք հարյուր դրամ), ինչպես նաև սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների՝ 825.05 հազ.դրամի (ութե հարյուր քսանհինգ հազար հիսուն դրամ) վճարումից՝ ընդամենը 12832.35 հազ.դրամի (տասերկու միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր հիսուն դրամ) չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱԲԿԻՐ- ԿԱՄԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Երևանի ավագանու 2019 թվականի հունիսի 26-ի հ.115-Ա և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հուլիսի 15-ի հ.2467-Ա որոշումների համաձայն՝ Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած 30018.2 հազ. դրամ զուտ շահույթներից 2019 թվականին Երևանի բյուջե պետք է վճարվեր 12007.3 հազ. դրամ շահութաբաժին, սակայն փաստացի վճարում չի իրականացվել:

Ընկերության կողմից շահութաբաժնի գումարների սահմանված ժամկետներում չվճարելը պայմանավորված է ֆինանսական ցուցանիշներով, մասնավորապես՝ ազատ դրամական միջոցների խիստ անբավարարությամբ:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի ապրիլի 28-ի N219-Ա որոշման՝ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում:

Ընկերության գույքի վերագնահատման արդյունքում պարզվել է, որ գնահատված արժեքը կազմում է 15865.5 հազ. դրամ, մինչդեռ Երևանի քաղաքապետի 04.06.2021թ. հ.1809-Ա որոշմամբ հաստատված լուծարման միջանկյալ հաշվեկշռով արձանագրվել է, որ 01.04.2021թ. դրությամբ կրեդիտորական պարտքերը կազմում են 29833.1 հազ. դրամ, որից 12007.3 հազ. դրամը կազմում է հիմնադրին շահութաբաժինների գծով պարտքը:

Առաջնորդվելով՝ Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշմամբ հաստատված «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման և պարտավորությունների գանձման»

կարգի 5-րդ կետով, 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2020թ. ապրիլի 28-ը (լուծարման որոշման ընդունումը) հաշվարկվել են տոկոսներ 825.05 հազ. դրամի չափով:

Լուծարման հանձնաժողովը լուծարվող Ընկերության պարտատերերին վճարումներ է կատարում ՔՕ 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից, հետևաբար առաջնային կարգով պետք է մարվեն աշխատավարձը և հարկային պարտավորությունները, որոնք 01.04.2021թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 5356.0 հազ. դրամ և 8350.4 հազ. դրամ:

Առաջնորդվելով Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման դրույթներով՝ առաջարկվում է ազատել Ընկերությանը շահութաբաժնի, ինչպես նաև հաշվարկած տոկոսների վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ

**«ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱԲԿԻՐ- ԿԱՄԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի եվ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ

**«ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի եվ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ